մեկնել՝ հետը առնելով ելևմտական նախարար Ա. Էնֆիաջեանին, դիւղ. Ց. Փիրալեանին և սպայ Ս. Մելիքեանին:

Նոյն նպատակով, մարտ 12-ին Թիֆլիս գնաց և Հայ. Խորհրդի նախագահ Աւ. Սահակեանը՝ դիմելու համար դաշնակից ներկայացուցիչներին՝ պարէնի ու սերմացուի խնդրանքով:

Հայ. Խորհրդի ու կառավարութեան դիմումները, ինչպէս նաև արտասահմանում կատարուած աշխատանքները, վերջապէս, լուեցին, և օգնութիւնը շատ չուշացաւ: Այս անգամ օգնութեան հասնողը Ամերիկան էր՝ Միացեալ Նահանգների պարենաւորման դիկտատոր Հուվէրը, Եւրոպայի փրկիչը յետպատերազմեան սովից: Հուվէրը եղաւ և Հայաստանի ժողովրդի իրական փրկիչը: Ինչ և լինի մեր վերաբերումը դէպի Ամերիկայի քաղաքական դերը հայկական խնդրում, ամերիկեան մարդասիրական նպաստն ու պարէնը երբեք չենք մոռանայ, չպէ՛տք է մոռանանք:

Մայիսի քսանին Բաթում եկաւ ամերիկեան առաջին նաւը 125,000 փութ ալիւրով, մի շաբաթ անցած, հասաւ ևս 600,000 փութ: Այդ մթերքը Հայաստան փոխադրելու համար վրաց կառավարութիւնը հայկական կառավարութիւնից պահանջեց 579 վագոն և 14 շոգեշարժ, ա՛յն ժամանակ, երբ Հայաստանի ունեցած վագոնների ընդհանուր թիւը 520 էր և շոգեշարժներինը՝ 16: Պէտք եղաւ ամերիկացիների և անգլիացիների միջամտութիւնը, 4 օրով կանգնեցուց Հայաստանի երկաթուղային մարդատար հաղորդակցութիւնը և բոլոր միջոցները յատկացուցին ալիւրի փոխադրութեան:

Ամերիկեան ալիւրի հասնելով՝ կամաց-կամաց սովը մեղմացաւ, երկիրը սկսեց մտնել բնականոն հունի մէջ, և ժողովուրդն ու կառավարութիւնը կարողացան նուիրուել երկրի վերաշինութեան ու պետութեան կազմակերպման գործին: Ցունիսին կառավարութիւնը հնարաւորութիւն ստացաւ Ախալքալաքի ժողովրդին էլ հաց հասցնել. վրաց կառավարութիւնը, որ այնքան եռանդ էր թափում Ախալքալաքը ստանալու համար, սովից կոտորուող ախալքալաքցիներին օգնելը իր պարտականութիւնը չէր համարում*):

*

Որքան էլ դժուար լինէր կացութիւնը, սովն ու հիւանդութիւնները չէին այլևս հայ ժողովրդին գրաղեցնող գլխաւոր ցաւերը: Կառավարութեան առջև կանգնած էին մի շարք պետական ու ազգային լուրջ խնդիրներ, որոնց մէջ առաջին տեղը բռնում էին սահմանների ընդարձակման և ներդաղթի հարցերը: Հարցեր, որոնց վերաբերմամբ Անդրկովկասի անգլիական հրա-

---

*) 1919 թւի ընթացքում Հայաստանը Ամերիկայից ստացաւ 1,295,243 փութ ալիւր, 256,758փ. ցորեն, 125,000փ. լոբի, 68,563փ. բրինձ, 20,000փ. կորեկ, 8,010փ. եգիպտացորեն, 10,738փ. վարսակ, 5,950,000 տուփ խտացուած կաթ, 12,000փ. կակաօ, 44,000փ. շաքար, 5,000փ. ճարպ, 1,500փ. թէյ: Համաձայն կնքուած պայմանի, 1920 թւի սկզբին էլ գալու էր 2,170,000փ. ալիւր: Ամերիկայից ստացուող ալիւրից 238,449 փութ ուղարկուեց Ախալքալաք: Ալիւրի մի մասն էլ գրաւեց վրաց կառավարութիւնը, իբրև փոխադրութեան վարձագին: